Հելսինկիի Կոմյունիկեն

Մասնագիտական Կրթության և Ուսուցման ոլորտում Եվրոպական Ընդլայնված Համագործակցության վերաբերյալ

2006թ. դեկտեմբերի 5-ին Հելսինկիում գումարված գագաթնաժողովին[1] մասնակից Մասնագիտական Կրթության և Ուսուցման Եվրոպական Նախարարների[2], Եվրոպական Սոցիալական գործընկերների[3] և Եվրոպական Հանձնաժողովի Կոմյունիկեն Կոպենհագենյան Գործընթացի գերակայությունները և ռազմավարությունները վերանայելու վերաբերյալ

I. ԵՎՐՈՊԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Ներդրում մարդկային կապիտալում և պահանջվող հմտություններում

Կրթությունը և ուսուցումն ունեն առանցքային դերակատարություն Եվրոպային նետված մարտահրավերներին արձագանքելու համար՝ գլոբալիզացիա, ծերացող բնակչություն, առաջացող նոր տեխնոլոգիաներ և հմտությունների կարիքներ: Սա իր արտացոլումն է գտնում Եվրոպական Միության օրակարգում, Լիսաբոնի վերանայված ռազմավարությունում և 2005-2008թթ. աճի ու աշխատանքների համար ինտեգրացված ուղենիշներում[4]: Այն մարդկային կապիտալում կատարելագործված և մեծացված ներդրումների և մարտահրավերներին արձագանքող կրթության ու ուսուցման համակարգերի տեղայնացման կոչ է անում:

ՄԿՈՒ-ն ցկյանս ուսումնառության գլխավոր մասն է կազմում

Ցկյանս ուսումնառությունը ընդգրկում է ուսումնառությունը բոլոր տեսակներով և ձևաչափերով: Ցկյանս ուսումնառության ռազմավարությունները[5] պետք է երաշխավորեն լավ գործառութային ուսուցման շուկա և հմտությունների լայն բազա: **ՄԿՈՒ-ն՝ Մասնագիտական Կրթությունն ու Ուսուցումը,** սրա անքակտելի մասն է: Այն ունի առանցքային դերակատարություն մարդկային կապիտալի կուտակման մեջ՝ հասնելու տնտեսական աճի, զբաղվածության և սոցիալական նպատակներին: ՄԿՈՒ-ն էական գործիք է, որը ապահովում է Եվրոպական քաղաքացիներին հմտություններով, գիտելիքով և կարողություններով, որոնք անհրաժեշտ են աշխատաշուկայում և գիտելիքահեն հասարակությունում: Իրական է մնում այն փաստը, որ ՄԿՈՒ-ն սպասարկում է Եվրոպայում ուսումնառուների մեծ մասին, և մասնագիտական հմտություններն ու կարողությունները հետագա աշխատուժի մեծ մասի պահանջ կունենան:

Կրկնակի մարտահրավեր. երիտասարդների և աշխատանքային կյանքով ապրողների ներգրավում

Եվրոպական ՄԿՈՒ քաղաքականությունները պետք է նպաստեն ՄԿՈՒ բարձր որակին և պայմաններ ստեղծեն կատարելագործելու համար աշխատուժ ներկայացնող անձանց հմտությունները շարունակական ՄԿՈՒ միջոցով: Քաղաքականությունները պետք է ներգրավեն մասնագիտական ուսուցման և/կամ բարձրագույն կրթության մեջ գտնվող բոլոր երիտասարդներին՝ միևնույն ժամանակ երաշխավորելով, որ նրանք ձեռք են բերում աշխատաշուկային և իրենց հետագա կյանքին համապատասխան հմտություններ ու կարողություններ: Բացի այդ, քաղաքականությունները պետք է ծառայեն արդեն

աշխատանքային կյանքով ապրող մարդկանց՝ երաշխավորելով հնարավորություններ նրանց կարիերայի հետագա զարգացման համար: Որպես կրթության ճկուն ուղիների մի մաս՝ ՄԿՈՒ համակարգերը պետք է աստիճանաբար առաջընթացի հնարավորություն տան հետագա կրթությանն ու ուսուցմանը, հատկապես ՄԿՈՒ-ից բարձրագույն կրթություն անցնելու համար:

Աշխատանքային կյանքին համապատասխան հմտությունների բազայի պատրաստում

ՄԿՈՒ-ն պետք է ապահովի աշխատանքային կյանքին համապատասխան գիտելիքի և հմտությունների լայն բազա՝ միևնույն ժամանակ կարևորելով գերազանցությունը բոլոր մակարդակներում: Քաղաքականությունները և փորձերը պետք է գնահատեն ներդրման հարաբերական ազդեցությունները հմտությունների և կարողությունների տարբեր մակարդակներում: Միջին և տեխնիկական, ինչպես նաև բարձր մակարդակի հմտությունների առաջարկը պետք է մեծանա հաղթահարելու հմտությունների պակասը և օժանդակելու տևական նորարարությանն ու գիտելիքահեն հասարակության աճին:

Օժանդակություն մրցունակությանը և սոցիալական համախմբվածությանը

ՄԿՈՒ-ն ունի կրկնակի դերակատարություն մրցունակությանը օժանդակելու և սոցիալական համախմբվածությունը մեծացնելու մեջ[6]: ՄԿՈՒ քաղաքականությունները պետք է ներգրավեն բնակչության բոլոր հատվածներին՝ առաջարկելով գրավիչ և մարտահրավերային ուղիներ մեծ հեռանկար ունեցող անձանց՝ միևնույն ժամանակ ներգրավելով կրթության մասով անընդունակ և սոցիալական մերժման ռիսկի մարդկանց՝ հատկապես դպրոցը վաղ լքող, ցածր մակարդակի որակավորումներ ունեցող կամ որակավորում ընդհանրապես չունեցող, հատուկ կարիքավոր, ներգաղթյալ և այլ մարդկանց: Այսպիսով, ՄԿՈՒ-ն պետք է անաչառ և արդյունավետ լինի[7]:

ՄԿՈՒ-ն ուժեղացնելու Եվրոպական և ազգային քաղաքականություններ

Հիմնական կրթությունը պետք է ապահովի երիտասարդներին գիտելիքով, հմտություններով, արժեքներով և դիրքորոշումներով, որոնք անհրաժեշտ են հետագա ուսումնառության, նախաձեռնության ու զբաղվածության համար, և նախապատրաստի ուսանողներին՝ հետևելու ընդհանուր կրթության և/կամ ՄԿՈՒ կամ երկուսի համատեղ ուղիներին:

Երիտասարդները ՄԿՈՒ-ում պետք է ձեռք բերեն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան հմտություններ և կարողություններ զբաղվածության ու ցկյանս ուսումնառության համար: Սա քաղաքականությունների կոչ է անում՝ կրճատելու ՄԿՈՒ-ից

դուրս մնացած անձանց թիվը և ավելի հեշտացնելու անցումը դպրոցից աշխատանք օրինակ կրթությունն ու ուսուցումը աշխատանքի հետ համատեղելու միջոցով (ձեռնարկությունների և աշխատանքի վրա հիմնված ուսումնառության միջոցով):

Աշխատուժի հմտությունները, կարողությունները և շարժունությունը պետք է կատարելագործվեն ուսուցման և աշխատանքային փորձի միջոցով ձեռք բերված նախորդ ուսումնառության ճանաչմանը խրախուսելու միջոցով: Ուսուցման հնարավորություններ պետք է ապահովվեն աշխատանքային կյանքով ապրող մարդկանց համար: Միևնույն ժամանակ ուսումնառության հնարավորությունները պետք է հասանելի լինեն անընդունակ անհատների ու խմբերի, և, հատկապես, քիչ կրթված անձանց համար:

Բիզնեսի մրցունակ միջավայրերը և ազգային չարաշահված բյուջեները մարտահրավերներ են նետում երաշխավորելու համար անհրաժեշտ *ներդրումներ հմտությունների մեջ:* Պետական և մասնավոր ներդրումը ՄԿՈՒ-ում պետք է կատարելագործվի հավասարակշռված և բաշխված ֆինանսավորման ու ներդրման մեխանիզմների հետագա զարգացման միջոցով: Հակառակ սրան՝ ուսուցման համակարգերը պետք է լինեն արդյունավետ ակնկալվող արդյունքներն արդարացնելու համար: Սա ուսուցման համակարգերի ավելի արդյունավետ ղեկավարման և աշխատաշուկայի հմտությունների կարիքների փոփոխմանն արձագանքելու կոչ է անում. ուսուցումը պետք է ղեկավարվի ըստ պահանջարկի:

II. ԿՅԱՆՔԻ ԿՈՉԵԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿՈՊԵՀԱԳԵՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բազմազանություն՝ դրական հատկանիշ և մարտահրավեր

Եվրոպական ՄԿՈՒ համակարգերի բազմազանությունը դրական հատկանիշ է, որը ծառայում է որպես հիմք երկկողմ ուսումնառության և ներշնչող բարեփոխումների համար: Միևնույն ժամանակ այս բազմազանությունը էական է դարձնում որակի խնդիրների վերաբերյալ թափանցիկության և ընդհանուր ըմբռնման մեծացումը և, հետևաբար, փոխվստահությունը ՄԿՈՒ համակարգերի և փորձերի միջև: Նպատակը պետք է լինի Եվրոպական ՄԿՈՒ ոլորտին աջակցելը, որտեղ մեկ երկրում ձեռք բերված որակավորումներն ու հմտությունները ճանաչվում են ամբողջ Եվրոպայում՝ այսպիսով օժանդակելով երիտասարդների և մեծահասակների շարժունությանը: Սույն ՄԿՈՒ ոլորտը պետք է մշակվի ընդհանուր շրջանակների, գործիքների կիրառման միջոցով և օժանդակվի ակներևության վրա հիմնված քաղաքականության մշակմանը հնարավորություն տվող համեմատելի տվյալների միասնական կիրառման միջոցով:

ՄԿՈՒ կատարողականությունը, որակն ու գրավչությունը կատարելագործող գործընթաց

Մասնագիտական Կրթության և Ուսուցման ոլորտում Եվրոպական Ընդլայնված Համագործակցության վերաբերյալ Կոպենհագենյան Գործընթացը[8] մեկնարկեց որպես Եվրոպական ռազմավարություն՝ զարգացնելու ՄԿՈՒ համընդհանուր կատարողականությունը, որակը և գրավչությունը Եվրոպայում: 2002թ. ի վեր գործընթացն էականորեն նպաստել է Եվրոպայում ՄԿՈՒ տեսանելիության և պրոֆիլի մեծացմանը: Այն ունի տարբեր ասպեկտներ.

Քաղաքական գործընթաց. Գործընթացն ունի էական դերակատարություն ՄԿՈՒ կարևորությունը քաղաքական որոշումներ կայացնողների համար ընդգծելու գործում: Այն հեշտացնում է Եվրոպական ընդհանուր ձեռքբերումների և նպատակների համաձայնեցումը, ազգային մոդելների ու նախաձեռնությունների քննարկումը, ինչպես նաև Եվրոպական մակարդակով փորձի լավ օրինակների փոխանակումը: Գործընթացը, ազգային մակարդակով, նպաստում է ՄԿՈՒ վրա կենտրոնացման ուժեղացմանը և ունի ներշնչող ազգային բարեփոխումներ:

Ընդհանուր գործիքներ մշակելու գործընթաց. Գործընթացի մեկ այլ կենտրոնական դերակատարությունը Եվրոպական ընդհանուր շրջանակների և գործիքների մշակելն է, որոնց նպատակն է մեծացնել կարողությունների և որակավորումների

թափանցիկությունն ու որակը, ինչպես նաև հեշտացնել ուսումնառուների և աշխատակիցների շարժունությունը: Գործընթացը ճանապարհ է հարթում դեպի Եվրոպական աշխատաշուկա, իսկ Եվրոպական ՄԿՈՒ ոլորտը՝ Եվրոպական բարձրագույն կրթության տարածք:

Երկկողմ ուսումնառությանը խթանող գործընթաց. Գործընթացն օժանդակում է Եվրոպական համագործակցությանը: Այն թույլ է տալիս մասնակից երկրներին մշակել իրենց քաղաքականությունները՝ ելնելով այլ երկրների փորձից, և ապահովում է շրջանակով միմյանց հետ աշխատելու, ուրիշներից սովորելու, մտքերը, փորձը և արդյունքները կիսելու համար:

Շահագրգիռ կողմերին ներգրավող գործընթաց. Գործընթացն ամրապնդում է տարբեր շահագրգիռ կողմերի ներգրավումը և հնարավորություն է տալիս նրանց՝ նպաստելու ընդհանուր ձեռքբերումներին:

Կոպենհագեն – Մաստրիխ – Հելսինկի

Գործընթացի գերակայությունները առաջին անգամ սահմանվեցին Կոպենհագենի Դեկլարացիայում[9] 2002թ. դեկտեմբերին: 2004թ. դեկտեմբերին Մաստրիխի Հռչակագրի[10] մեջ դրանք հատկորոշվեցին ու զարգացան, և առաջին անգամ ազգային գերակայությունները համաձայնեցվեցին: Երկրորդ լրացուցիչ համդիպմանը Հելսինկիում 2006թ. դեկտեմբերի 5-ին գործընթացը գնահատվեց, և նրա ռազմավարություններն ու գերակայությունները վերանայվեցին:

Ավելի կենտրոնացած գործընթաց

Գործընթացը դիտարկվում է որպես հաջող և անհրաժեշտ: Այժմ՝ Կոպենհագենից չորս տարի հետո, կարևոր է կենտրոնանալ աշխատանքը շարունակելու և ավարտելու, ինչպես նաև արդեն սկսած նախաձեռնությունները գործածության մեջ դնելու վրա: Սակայն գերակայությունների հատվածների սահմանափակ քանակով և հստակ նշանակետերով ավելի կենտրոնացած մոտեցում պետք է ապահովվի: Տարբեր նախաձեռնություններն ու գործիքները պետք է լինեն փոխկապակցված և երկուստեք օժանդակող, և ՄԿՈՒ-ն պետք է մշակվի բոլոր մակարդակներով՝ որպես ցկյանս ուսումնառության էական մաս՝ ունենալով սերտ կապեր ընդհանուր կրթության հետ:

Գործընթացի համաձայն նախաձեռնված քայլերը կամավորական են և մշակվում են լիարժեք համագործակցության միջոցով: Հատուկ շեշտ է դրվում աշխատանքի բոլոր փուլերում սոցիալական գործընկերների և ճյուղային կազմակերպությունների

ներգրավման, ինչպես նաև աշխատանքի մեջ Եվրոպական մակարդակով ազգային փորձերի հետադարձ կապի ապահովման վրա:

Բարեփոխումները ժամանակ են պահանջում, հետևողականություն է անհրաժեշտ

Մինչ Կոպենհագենի և Մաստրիխի գերակայությունները ուժի մեջ են, գործընթացը պետք է ամրապնդվի, և աշխատանքը պետք է կենտրոնացած լինի հետևյալ առաջնահերթային հատվածների վրա.

1. ՄԿՈՒ պատկեր, կարգավիճակ և գրավչություն: Այս համատեքստում շեշտը ավելի շատ պետք է դրվի ՄԿՈՒ համակարգերի, հաստատությունների և/կամ ապահովողների լավ ղեկավարման վրա:
2. Եվրոպական ընդհանուր գործիքների հետագա զարգացում, փորձարկում և կիրառում: Նպատակը մինչև 2010թ. համաձայնեցված գործիքների առկա լինելն է:
3. Երկկողմանի ուսումնառությունն ամրապնդելու ավելի սիստեմատիկ մոտեցում: Սրան խթանելու համար հատուկ ուշադրություն պետք է բևեռել մինչև 2008թ. ՄԿՈՒ վիճակագրության ծավալների, համեմատելիության և վստահելիության զարգացման վրա:
4. Բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավում աշխատանքում, քանի որ Կոպենհագենյան գործընթացը ընթանում է դեպի իրագործման փուլ:

Հաջորդ լրացուցիչ հանդիպումը

Հաջորդ նախարարական լրացուցիչ հանդիպումը տեղի կունենա երկու տարի անց առաջընթացը գնահատելու, ՄԿՈՒ գերակայություններն ու ռազմավարությունները «Կրթություն և Ուսուցում 2010» աշխատանքային ծրագրում ամրապնդելու և մինչև 2010թ. գործընթացի կենտրոնացմանն անդրադառնալու համար:

III. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՄԿՈՒ գրավչությունն ու որակը զարգացնելու վրա կենտրոնացած քաղաքականություն

Մասնակից երկրները մեծ ուշադրություն պետք է դարձնեն ՄԿՈՒ պատկերին, կարգավիճակին և գրավչությանը: Սրա համար անհրաժեշտ է.

- կյանքի ընթացքում կատարելագործված ուղղորդում՝ ճիշտ հաշվարկելու հնարավորությունները և ՄԿՈՒ ու աշխատաքային կյանքի կարիքները՝ ներառյալ կարիերայի ընդլայնված ուղղորդումը և խորհրդատվությունը դպրոցներում ու ընտանիքների համար՝ երաշխավորելու տեղեկացված ընտրություն,
- ՄԿՈՒ բաց համակարգեր, որոնք առաջարկում են մուտքի հնարավորություն դեպի ճկուն, անհատականացված ուղիներ և ստեղծում են ավելի լավ պայմաններ դեպի աշխատանքային կյանք անցնելու, հետագա կրթության ու ուսուցման առաջընթացի համար (ներառյալ բարձրագույն կրթությունը) և օժանդակում են աշխատաշուկայում մեծահասակների հմտությունների զարգացմանը,
- սերտ կապեր աշխատանքային կյանքի հետ և՛ նախնական, և՛ շարունակական ՄԿՈՒ-ում, ինչպես նաև աշխատավայրում սովորելու հնարավորությունների մեծացում,
- օժանդակում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության ճանաչմանը՝ խթանելու կարիերայի զարգացմանն ու ցկյանս ուսումնառությանը,
- քայլեր, որպեսզի մեծանա տղամարդկանց կամ կանանց հետաքրքրությունն ու մասնակցությունը ՄԿՈՒ այն ոլորտներում, որտեղ նրանք ներկայացված չեն, օրինակ կանայք տեխնոլոգիայի ոլորտում,
- հմտությունների գերազանցության կատարելագործում և կարևորում՝ օրինակ համաշխարհային մակարդակի չափորոշիչները կիրառելու կամ հմտությունների մրցույթներ կազմակերպելու[11] միջոցով:

ՄԿՈՒ գրավչությունն ու որակը կատարելագործելիս շեշտը պետք է ավելի շատ դրվի ՄԿՈՒ համակարգերի և ապահովողների ՄԿՈՒ օրակարգը[12] պատրաստելու լավ ղեկավարման վրա հետևյալի միջոցով.

- արձագանքում անհատների և աշխատաշուկայի կարիքներին՝ ներառյալ հմտությունների կարիքների կանխորոշումը: Հատուկ ուշադրություն պետք է բևեռել փոքր և միջին ձեռնարկությունների կարիքներին,
- բարձր որակ ունեցող ուսուցիչներ և դասընթացավարներ, որոնք ստանձնում են շարունակական մասնագիտական զարգացումը,

- ազգային որակի ապահովում և կատարելագործում՝ համաձայն ՄԿՈՒ Որակի Ապահովման վերաբերյալ Խորհրդի եզրակացությունների[13],
- ՄԿՈՒ-ում պետական և մասնավոր ներդրումների մեծացում հավասարկշռված և բաշխված ֆինանսավորման ու ներդրման մեխանիզմների մշակման միջոցով,
- ՄԿՈՒ համակարգերի մեծացված թափանցիկություն,
- ազգային ռազմավարություններում հաստատությունների և/կամ ուսուցում ապահովողների ուժեղ ղեկավարում,
- տարբեր որոշում ընդունողների և շահագրգիռ կողմերի, հատկապես սոցիալական գործընկերների և ճյուղային կազմակերպությունների միջև ակտիվ գործընկերություն ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով:

2. *ՄԿՈՒ ընդհանուր գործիքների մշակում և իրագործում*

Եվրոպական ընդհանուր գործիքների մշակումը պետք է շարունակել, որպեսզի հնարավոր լինի ճանապարհ հարթել դեպի Եվրոպական ՄԿՈՒ տարածք և աջակցել Եվրոպական աշխատաշուկայի մրցունակությանը: Նպատակը մինչև 2010թ. համաձայնեցված գործիքների առկա լինելն է:

Եվրոպական ընդհանուր գործիքների հետագա զարգացում հատկապես ՄԿՈՒ-ում հետևյալի միջոցով.

- ՄԿՈՒ Կրեդիտային Եվրոպական Համակարգի[14] (ՄԿՈՒԿԵՀ) մշակում և փորձարկում՝ որպես կրեդիտի կուտակման և փոխանցման համար գործիք՝ հաշվի առնելով ՄԿՈՒ բնորոշ գծերը և բարձրագույն կրթության մեջ Կրեդիտների Փոխանցման և Կուտակման Եվրոպական Համակարգում[15] (ԿՓԵՀ) ձեռք բերված փորձը,
- որակի կատարելագործման վերաբերյալ համագործակցության ամրապնդում՝ կիրառելով ՄԿՈՒ Որակի Ապահովման Եվրոպական Ցանցը[16]՝ (ՄԿՈՒՈԱԵՑ) աջակցելու որակի ապահովման ընդհանուր ընկալման ստեղծմանը և մեծացնելու փոխվստահությունը: Համագործակցությունը բարձրագույն կրթության հետ պետք է շարունակվի:

Եվրոպական ընդհանուր գործիքների հետագա զարգացում, որտեղ ՄԿՈՒ-ն ունի առանցքային դերակատարություն հետևյալի միջոցով.

- ուսումնառության արդյունքների վրա հիմնված Որակավորումների Եվրոպական Շրջանակի[17] (ՈԵՇ) մշակում և փորձարկում, որը ՄԿՈՒ և ԲԿ տարածքների միջև ավելի լավ կապ ու մեծ հավասարություն է ապահովում և հաշվի է անում միջազգային ճյուղային որակավորումները,
- EUROPASS[18]-ի հետագա զարգացում՝ որպես թափանցիկության համար Եվրոպական միակ շրջանակ, և գործիքների մշակում ոչ ֆորմալ ու ինֆորմալ ուսումնառության ճանաչման համար՝ աջակցելու ու խթանելու ՈԵՇ-ի և ՄԿՈՒԿԵՀ-ի ներմուծմանը:

Եվրոպական ընդհանուր գործիքների իրագործում հատկապես ՄԿՈՒ-ում հետևյալի միջոցով.

- մասնակցություն ՄԿՈՒԿԵՀ-ի փորձարկմանը և խրախուսում դրա իրագործմանը,
- օժանդակում Ընդհանուր Որակի Ապահովման Շրջանակն ընդգծող սկզբունքներին՝ համաձայն ՄԿՈՒ որակի ապահովման վերաբերյալ Խորհրդի 2004թ. մայիսին կայացրած եզրակացությունների[13]՝ նպաստելու որակի կատարելագործման արվեստին և ավելի ակտիվ մասնակցութանը ՄԿՈՒՈԱԵՑ-ին:

Եվրոպական ընդհանուր գործիքների իրագործում, որտեղ ՄԿՈՒ-ն ունի առանցքային դերակատարություն հետևյալի միջոցով.

- որակավորումների ազգային համակարգերի կամ որակավորումների ազգային շրջանակների կապակցում ՈԵՇ-ին,
- օժանդակում որակավորումների ազգային համակարգերին միջազգային ճյուղային որակավորումներին միավորելու գործում՝ կիրառելով ՈԵՇ-ը որպես հենակետ,
- աջակցություն EUROPASS-ի լայնածավալ կիրառմանը:

3. Երկկողմանի ուսումնառության ամրապնդում

Ավելի սիստեմատիկ մոտեցում է անհրաժեշտ՝ ամրապնդելու երկկողմանի ուսումնառությունը, համատեղ աշխատանքը և փորձի փոխանակումը: Սա պետք է իրականացվի հետևյալի միջոցով.

- ընդհանուր հայեցակարգեր և համաձայնեցված սահմանումներ Եվրոպական մակարդակով, որպեսզի ազգային լուծումները, մոդելներն ու չափորոշիչները ավելի դյուրընկալելի դառնան,
- հատուկ թեմաների վերաբերյալ ուսումնասիրությունների ու հետազոտությունների համար Հանձնաժողովի ֆինանսավորում՝ խորացնելու Եվրոպական ՄԿՈՒ համակարգերի և փորձերի մասին ընկալումն ու նրանց կապերը աշխատաշուկայի և այլ կրթական հատվածների հետ,
- Հանձնաժողովի կողմից ցանցերի մշտադիտարկում, լավ փորձի օրինակների փոխանակում և գիտելիքն ու փորձագիտությունը սերմանելու համար կիրառվող մեխանիզմների մշակում,
- ՄԿՈՒ ոլորտում հավասար ուսումնառությանը խրախուսող սիստեմատիկ և ճկուն շրջանակ: Շրջանակը պետք է նաև օժանդակի ապակենտրոնացած հավասար ուսումնառությանը:

Համապատասխան և կայուն տվյալներն ու ցուցիչները գլխավորն են հասկանալու համար, թե ինչ է կատարվում ՄԿՈՒ-ում, ամրապնդելու երկկողմանի ուսումնառությունը, օժանդակելու հետազոտությանը, ինչպես նաև գցելու ակներևության վրա հիմնված ուսուցման քաղաքականության ֆունդամենտը: Մինչ հաջորդ նախարարական լրացուցիչ կոնֆերանսը (2008թ.), Հանձնաժողովը պետք է ունենա.

- հատուկ ուշադրություն ՄԿՈՒ վիճակագրության ծավալները, համեմատելիությունն ու հստակությունը զարգացնելու վրա, որպեսզի ՄԿՈՒ զարգացման առաջընթացը հնարավոր լինի գնահատել,
- ծայրահեղ ուշադրություն ցուցիչների և նշածողերի[19] փոխկապակցված շրջանակում ՄԿՈՒ բաղադրիչ մասի զարգացման վրա,
- առանձնահատուկ ուշադրություն ՄԿՈՒ ներդրումների և ֆինանսավորման վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության զարգացման վրա:

Վերոհիշյալին ավելի նպատակահարմար է հասնել՝ կիրառելով և համատեղելով առկա տվյալները, միևնույն ժամանակ ապահովելով ՄԿՈՒ համապատասխան ազգային/տարածաշրջանային տվյալներ, կայունություն ու համեմատելիություն կրթության ու ուսուցման վերաբերյալ այլ տվյալների հետ:

4. *Բոլոր շահագրգիռ կողմերի ներգրավում*

Կոպենհագենյան գործընթացի հաջողության գրավականը ՄԿՈՒ ոլորտում բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավումն է՝ ներառյալ, մասնավորապես, սոցիալական գործընկերներին Եվրոպական և ազգային մակարդակներով, ճյուղային կազմակերպություններին և ՄԿՈՒ ապահովողներին: Դրա համար անհրաժեշտ է.

- գործընթացի, գերակայությունների, գործողությունների վերաբերյալ համառոտ և հստակ տեղեկատվություն ու արդյունքների արդյունավետ տեղափոխում,
- շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցություն գործընթացի բոլոր փուլերում Եվրոպական, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներով,
- շեշտադրում գործընթացի արդյունքները փորձարկելու և իրագործելու աշխատանքում ՄԿՈՒ ապահովողների, ուսուցիչների ու դասընթացավարների ներգրավման վրա,
- ուսումնառուների և նրանց կազմակերպությունների ներգրավում ազգային և Եվրոպական մակարդակներով:

IV. ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

Կոպենհագենյան գործընթացի և նրա գերակայությունների իրագործումը պետք է օժանդակվի հետևյալի միջոցով.

- կառուցվածքային հիմնադրամների արդյունավետ օգտագործում՝ աջակցելու ՄԿՈՒ բարեփոխումներին ազգային մակարդակով,
- Ցկյանս Ուսումնառության Ծրագրի (2007-2013) նպատակաուղղված կիրառում՝ նպաստելու գործընթացին մասնավորապես նորարարության, փորձարկման և իրագործման համար,
- CEDEFOP-ի[20], ԵԿՀ-ի[21] և նրանց ցանցերի շարունակական աջակցություն: Նրանք, մասնավորապես, կմշտադիտարկեն գործընթացը առաջնահերթային փուլերում և կարձանագրեն զարգացումները,
- համայնքի այլ համապատասխան մարմինների և կոմիտեների ակտիվ մասնակցություն, օրինակ՝ Մասնագիտական Ուսուցման Գլխավոր Տնօրենները (ՄՈՒԳՏ), Մասնագիտական Ուսուցման Խորհրդատվական Կոմիտեն (ՄՈՒԽԿ), Կրթության և Ուսուցման Համակարգման Խումբը (ԿՈՒՀԽ),
- սերտ համագործակցություն EOROSTAT-ի[22], OECD-ի[23], CEDEFOP-ի և ԵԿՀ-ի վիճակագրության, ցուցիչների և նշաձողերի հետ,
- տեղեկատվության, փորձագիտության և արդյունքների փոխանակում երրորդ երկրների, հատկապես «ընդլայնման» և «Եվրոպական հարևանության» քաղաքականության միտում ունեցող երկրների հետ: Համագործակցությունը բարձր կատարողականություն ունեցող երկրների և այնպիսի միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսին է OECD-ն, պետք է ուժեղանա:

Այս աշխատանքում անդամ պետությունների մասնակցության իրավունքը պետք է երաշխավորված լինի:

Լիսաբոնի ազգային բարեփոխումների ծրագրերի տարեկան հաշվետվության ժամանակ առանձնահատուկ ուշադրություն պետք է բևեռել ՄԿՈՒ առաջընթացի վրա:

«Կրթություն և Ուսուցում 2010» աշխատաքային ծրագրի ամբողջական երկամյա հաշվետվությունը պետք է ներառի ՄԿՈՒ վերաբերյալ հատուկ մաս՝ հնարավորություն տալով գործընթացի մշտադիտարկման և Եվրոպական Խորհրդին ներկայացվող գլխավոր արդյունքների որոշարկման:

Գործընթացին աջակցում է նաև Եվրոպական սոցիալական գործընկերների «Կարողությունների և որակավորումների ցկյանս զարգացման գործողությունների շրջանակ»[24]-ը, որը նույնպես ենթակա է տարեկան լրացուցիչ հաշվետվության:

ՀՂՈՒՄՆԵՐ

[1] *www.minedu.fi/vet2006*

[2] ԵՄ անդամ պետություններ (Ավստրիա, Բելգիա, Կիպրոս, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովենիա, Սլովակիա, Իսպանիա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն), կազմի մեջ մտնող երկրներ (Բուլղարիա, Ռումինիա), թեկնածու երկրներ (Խորվաթիա, Թուրքիա) և ԵԱԱՀ/ԵՏՏ երկրներ (Իսլանդիա, Լիխտենշտեյն)

[3] ETUC *(www.etuc.org),* UNICE *(www.unice.org*), CEEP *(www.ceep.org),* UEAPME *(www.ueapme.com)*

[4] *http://ec.europa.eu/growthandjobs/index_en.htm*

[5] *http://ec.europa.eu/education/policies/2010/lll_en.html*

[6] Նախագահության եզրակացությունները, Բրյուսելի Եվրոպական Խորհուրդ, 2006թ. 23/24 մարտ (doc. 7775/06), *http://register.consilium.europa.eu/pdf/en/06/st07/st07775.en06.pdf*

[7] *http://ec.europa.eu/education/policies/2010/doc/comm481_en.pdf*

[8] *http://ec.europa/eu/education/policies/2010/vocational_en.html*

[9] *http://ec.europa.eu/education/copenhagen/copenhagen_declaration_en.pdf*

[10] *http://ec.europa.eu/education/news/ip/docs/maastricht_com_en.pdf* և *http://www.vetconference-maastricht2004.nl/*

[11] Ինչպիսիք են Եվրոպական Հմտությունների Մրցույթը, որը պետք է կազմակերպվի Նիդեռլանդներում 2008թ., *http://www.euroskills2008.nl/wm.cgi* և երկամյա Համաշխարհային Հմտությունների Մրցույթներ *http://www.wsc2005helsinki.com/*

[12] Գլխավոր հաղորդագրությունները Գարնանային Եվրոպական Խորհրդին (փաստ. 7620/06) *http://ec.europa.eu/education/policies/2010/doc/jointkey06_en.pdf*

[13] ՄԿՈՒ որակի ապահովման վերաբերյալ եզրակացություններ (փաստ. 9599/04) *http://ec.europa.eu/education/policies/2010/doc/vetquality_en.pdf*

[14] *http://ec.europa.eu/education/ecvt/index_en.html*

[15] *http://ec.europa.eu./education/programmes/socrates/ects/index_en.html*

[16] *http://www.trainingvillage.gr/etv/Projects_Networks/quality/*

[17] *http://ec.europa.eu/education/policies/educ/eqf/index_en.html*

[18] *http://ec.europa.eu/education/programmes/europass/index_en.html* և *http://europass.cedefop.europa.eu/*

[19] Կրթության և ուսուցման ոլորտում նոր ցուցիչների վերաբերյալ Խորհրդի 2005թ. մայիսի 24-ի եզրակացությունները (OJ C 141, 10.6.2005, 7 էջ)
http://eur-lex.europa.eu/LexUriServ/site/en/oj/2005/c_141/c_14120050610en00070008.pdf

[20] *http://www.cedefop.europa.eu/*

[21] *http://www.etf.europa.eu/*

[22] *http://epp.eurostat.ec.europa.eu/*

[23] *http://www.oecd.org/*

[24] *http://www.ueapme.com/docs/pos_papers/2002/FINAL%20DSE%20Framework%20of%20actions %20EN.doc*